

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻՍ

Տարեկան 12 ծր.

Վեցամսեայ 6 ծր.

ԱՐՏԱՍԱՅՍԱՆ

Երկու քիւր մէկ ծրարով

Տարեկան . . . 14 ծր.

Վեցամսեայ . . . 7 ծր.


ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2. 60 Տօյար

Վեցամսեայ 1. 50 »

Կ Ա Ն Ե Ի Կ

Մանուցման տողը
20 սանթիմ



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏՈՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԻՔՇՈՐԹԻ ԵՒ ՇՈՐԱԹ

ՀԱՍՅԷ

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

Иравуни

НАРНА

Կրտսերները եւս լին
տրոշիր

Կ Ո Չ

ՍՐՏԱՍԱՅՍԱՆԻ

ԲՈՒՈՐ ՀԱՅԵՐՈՒՆ

Հայեր, հայեր, վերսկսան հո-
ւիւ արեան ուղիները Հայաստա-
նի կողմերէն, և մեր դազան թըշ-
նամիները ամէն ջանք ու հնար
ի գործ դրած խղճել կը փափա-
քին մեր ձայնն ու գոյութիւնն
արեան այս ճապաղիքին մէջ:

Հայեր, մեզ բնաջնջել կը
խորհին մեր թշնամիները թէ
ճաճկատանի եւ թէ Կովկասի
մէջ, և մեր յուսահատ հայրերն
ու մայրերն, եղբայրներն ու
քոյրերն իրենց դառնալից նախ-
ուածքներն յառած մեզ՝ արտա-
սահմանի հայերուս վրայ, մեզ-
նէ օգնութիւն և փրկութիւն
կ'սպասեն. վա՛յ մեզ, անտար-
բեր հայերուս:

Արդ եղբայրներ, եթէ ճըշ-
մարիտ է որ մենք կը սիրենք
մեր ազգութիւնը և անոր փրկ-
կութիւնը, եթէ իրաւ է թէ
մենք 25-30 տարուան դառն ու
գեղաղդ փորձերէն խրատուած
պատրաստ ենք իրարու օգնել,
հայրենիքի վերականգնումի ար-
դար գործին օժանդակել, եթէ
իրաւ է որ մենք գիտենք փրկ-
կութեան և ազատութեան ար-
ժէքը, և եթէ իրաւ է, թէ՛ մենք
զգուած գանձ ենք անձնական
անտի վէճերէ, կուսակցական
յետին մտածումներէ և այս օր
բովանդակ հայութեան շահը
չենք ուզեր զոհել մեր անձնա-
կան կրքերուն ուրեմն թանկ ժա-
մանակն է միահամուռ հեռա-
տեսութեն գործելու, ձեռք ձեռ-
քի տուած ընել ինչ որ կարող
ենք և ինչ որ բացարձակօրէն
անհրաժեշտ է:

Համիտի վերջին հարուած-
ներն են որ ուժգնօրէն կ'իջնեն
մեր տարաբախտ եղբայրներու
գլուխներուն վրայ, հայութիւ-
նը բնաջնջելու նպատակաւ, զի
ամէն օր յաջորդակի հեռագը-
րալուրերը մեզ կը գուժեն կո-

տորած ու թալան Պաթում ու
Պագու, Սեբաստիա, Կեսարիա,
Շուշի և Նուխի, Կարին և Տը-
րապիզոն, և վերջապէս մօտ է
վայրկեանը լսելու թէ ընդհա-
նուր ջարդ կայ Կովկասի և Տաճ-
կաստանի մէջ համայն հայու-
թեան:

Ինչ կ'ըսէք արտասահմանեան
հայ եղբայրներ, մենք լսենք
ու տեսնենք այս ամենը ու տա-
կաւին անտարբեր մնա՞նք. ու
մենք իբրեւ հայ դեռ իրաւունք
պիտի ունենա՞նք ապրելու, ինչ
անունով և ինչ երեսով. և մի-
թէ օտարները իրաւունք չի
պիտի ունենան ըսելու «Հայք
արժանի էին իրենց այս վիճա-
կին»: Ամօթ է մեզ և բիւր ա-
մօթ եթէ անտարբեր մնա՞նք այս
մեծ ու ահաւոր ճգնաժամին
հանդէպ. և նաև մեծ մեղք ու
ոճիր մեր խղճի և գիտակցու-
թեան առջև:

Հայեր, մեր բնաջնջումը վըճ-
ուած են մեր թշնամի բռնակալ-
ները և կը ջանան զայն պարբե-
րաբար կատարել, բայց չպիտի
յաջողին եթէ մենք այս օրէն
այս ժամէն սկսինք մեր գլխու
ճարը նայիլ. Անհատական և
կուսակցական խնդիրները տեղի
առնու են, դադարելու են Հնչակ-
եան, Դաշնակցական, Զեզոք եւլն.
խտիրները. զի ազգային մեծ
խնդիրն է որ կը յուզուի, այս-
ինքն յիմնելու եւ չ'իմնելու խն-
դիրն. ամենակենսական հարց
մը բոլոր հայութեան համար,
որու վրայ ամեն հայ իւր կար-
գին մտածելու և գործելու մեծ
պարտականութիւնն ունի:

Մեր այս եղբրական տեսարա-
նին առջև, ապիկար և փառա-
տենջիկ Օրմանեանը և կարգ մը
եպիսկոպոսներ Սուլթանին ճըշ-
ման տակ գոհունակութեան և
շնորհակալութեան ուղերձներ
կ'ստորագրեն ու կը մատուցանեն
Մեծ Մարդասպան Կարմիր Սուլ-
թանին. և գազանը դեռ այսչա-
փով ալ չը բաւականացած կ'ըս-
տիպէ յիշեալ կղերականներ որ
խնդրագրով մը դիմեն մեր Վեհ.
Հայրապետին որ գրէ և յորդորէ
Արտասահմանի յեղափոխական-

ներն որ հանգիստ նստին և
Սուլթանի կամքին հակառակ
գործեր չը կատարեն, որպէսզի
Սուլթանն ալ հայերուն լաւ նա-
յի (•••) տեսէ՛ք, ինչ սոսկա-
լի դաւ ու դարան որ Երևոյցը
կը լարէ մեզ հայերուս համար.
Թէ ինչո՞ւ համար այս դաւը.
— Զի շուտով պիտի վերաբացուի
Լաւիէի դեսպանախորհուրդը, ուր
պիտի կարգադրուին քաղաքա-
կան առկախ խնդիրներ և թե-
րեւս մերն ալ. եթէ մենք այժ-
մէն մեր ձայնը յաջողինք հոն
հասցնել, պարզելով թրքական
գազանութիւններն և Կովկասի
դաւերն իրենց հայաջինջ ե-
րանգներով. Ուստի Կարմիր
Սուլթանը կանխահոգութեամբ
հարկ կը տեսնէ ի ձեռին ունե-
նալ Հայ ազգի պաշտօնական շը-
նորհակալութեան գրերն. և ե-
թէ մեր ծերունազարդ Վեհ.
Հայրապետը լսէ (?) այդ Սուլթա-
նական թերադրանքն և յեղա-
փոխականներուն ուղղէ ո՛ր եւ է
գիր հանդարտութիւն եւլն. պա-
տուիրորդ այն աւետն Մեծ Մար-
դասպանի ներկայացուցիչը այդ
երկու դիւանագիտական զէնքե-
րով զինեալ պիտի չէզոքացնէ
ո՛ր եւ է Հայանպատ միջամտու-
թիւն իւր համախոհներով.
Ուրեմն եթէ մենք վաղօրօք մեր
ձայնն կարենանք այդ դեսպա-
նաժողովին մէջ բարձրացնել.
մեծ հաւանականութիւն կայ ան-
կէ օգտուելու, որուն համար
պարտինք մեր բոլոր ճիգերն
ու կարելիներն ի գործ դնել.
զի գէթ առ այժմ այս միակ մի-
ջոցն է մնացած մեր դատը քա-
ղաքագիտօրէն պաշտպանելու:

Արդ, Ամերիկա, Անգլիա, Ֆը-
րանսա, Եգիպտոս, Ռումանիա,
Պուլկարիա եւլն եւլն, տեղեր
բնակող Հայ եղբայրներ փու-
թացէ՛ք խաղաղ միութիւններ
կազմել, դրամ հաւաքել և հա-
յութիւնը պատշաճօրէն ներկայա-
ցնող մարմին մը կազմել. որ խօ-
սի ու ներկայանայ յանուն բո-
վանդակ հայութեան, զի այնպէս
կը յուսանք թէ այս միակ միջո-

ցը պիտի վճռէ Հայութեան բաղ-
դը կամ ճակատագիրը:

ՄԻ ՔԱՆԻ ՀԱՅԵՐ

16 Սեպտ. 1905

Վառնա

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԼՈՒՐԵՐ

Պագուի եւ չրջականերու գործա-
րանատէրերը հոկտ. 3-ին (ն. տ.)
Զարէն ունկնդրութեան պիտի ընդու-
նուին. Անոնք պիտի հասկցնեն կայ-
սեր թէ ձեռք «առնուած վարանս»
եւ անվճարական միջոցները ու հրա-
մանները անբաւական են գործերը
օգտակարապէս վերսկսելու. Իրօք
կառավարութեան գործը դժուար էր,
բայց սա ալ ճիշդ է թէ կառավա-
րութիւնը սխալ գործեց ոչինչ չը կան-
խատեսելով, հակառակ այնչափ կըրկ-
նուած մեր զեկոյցներուն. և ոչինչ
չըրաւ. Ահա անհամար հարստութիւ-
նը փճացաւ, հազարաւոր քաղաքա-
ցիներ սպաննուեցան, ողջ մնացողները
իրենց հարստութիւնը բոլորովին կոր-
սնցուցին. գործաւորներու երեք քա-
ռորդը անգործ եւ անօթի կը թա-
փառին եւ պիտի թափառին, դեռ
ամիսներով փոզոցներու մէջ հաց
պահանջելով. Ոչ թէ միայն երէկ չը
պատժեցին այլ նաեւ այսօր գալիքը չեն
կանխատեսել, այն աստիճան որ ե-
րէկ կողոպտող ու սպաննող
խումբերը՝ առանց կշտամբական բառ
մը լսելու, պատրաստ կը գտնուին
վերսկսելու նոյնը եւ անոնց պիտի
միտնան շուտով քսան հազար ան-
գործ մնացած գործաւորները:

«Մեր ենթարկուած ներկայ տագնա-
պին ճշգրիտ հետեւութիւնը այն է,
Բայց այն բարեմիտ մարդիկը որ
հոս բերած էին իրենց դրամագը-
րախները, իրենց աշխատութիւնը եւ
իրենց ճարտարամտութիւնը, որոշած
են ամեն բան թողուլ երթալ ուրիշ
տեղեր բաղդ որոնելու կ'է անմիջա-
պէս պայմանները չը փոխուին»:

— Մարիս ի թղթակիցին. Պագուի
կառավարիչը սա իմաստով խօսած
է. — Գործերը լաւ կերթան. շնորհա-
ւորելի է որ խաղաղութիւն կնքուե-
ցաւ. Դանուած զօրքը բաւական է
հաւանական զէպրելու առջեւ տա-
նելու. Փոխաբքան ալ կը կարծէ թէ
Պագուս երկու ուժի առջև կը սրտ-
նուի, մէկը Թաթարներու բազուկի
բիրա ուժը եւ միւսը Հայոց բարո-
յական ուժը մատուցողական եւ զբ-

մական տեսակետներով : Այս երկու
ուժերը որ կը բաժնուին նաեւ կրօն-
քով եւ բարձր աստիճաններ ,
երբեք չպիտի համաձայնին , անոնք
իրարու չպիտի մերձենան . բայց կա-
ռավարութեան՝ որուն ինք ներկա-
յացուցիչն է , պարտքն է դէմ կե-
նայ որ այդ երկու ուժերուն մէջ ա-
ղետարեր բաղխում մը չըլլայ :

Կառավարիչը կաւելցնէ , պարտա-
դարաւ յեղափոխականներու երրորդ
կուսակցութիւն մըն ալ կայ , որ իր
բոլոր քաղաքականութիւնը ցեղերու
այս հակառակութեամբ կը սնուցա-
նէ եւ ար առիթ չը կորսնցնէր
նոյնիսկ խռովութիւններ ստեղծելու
որով կառավարութիւնը կուզէր խու-
սափիլ : Ան կը գործէ խորամանկու-
թեամբ եւ ահաբեկութիւն , նաեւ զըր-
պարտութեամբ : Կը շղթայազերծէ ըն-
կերական տարրերը , իրեն շահը գըտ-
նելով հոն ուր խռովութիւն եւ ան-
խիստութիւն կը տիրէ : Իսկ ինձ
գալով , կի յարէ կառավարիչը , տե-
սէք ինչ է իմ դիրքս . ես կը ձգտիմ
բոլորին իրաւունքները յարգել տալ ,
սակայն թաթառները կըսեն թէ
Հայերէն 150,000) ուսուցիչ կը ստա-
նամ , Հայերն ալ կըսեն թէ թաթառ-
ներէ 150,000 կը ստանամ , որ կընէ
300,000 եւ սակայն հաւաքացէք որ
ռիչնչ չեմ ստանար : Յեղափոխական
յանձնախումբերը իմ անձնա դէմ ըս-
պառական յայտարարութիւններ կը
դրկեն պահանջելով որ գործադուլը
ազատ ձգեմ որ իրաւունք մըն է :
Միթէ ես գործադուլ մը արգելեմ
եմ : Տեսէք ինչ է իմ դիրքս : Հա-
յերը եւ թաթառները կը արտնշան
թէ հազար դժուարութիւններու կը
բաղխին : Լաւ , միթէ ես վարդէ ան-
կողմի մը վրայ կը գտնուիմ :

Պատու 11 սեպտ.— Կայարանը գը-
րաւուած է զօրքերէ : Զինուորներ
կը չրջագային հակոգութեան համար
ամբողջ քաղաքին մէջ : Թաթառա-
կան թաղերուն մէջ գտնուող Հա-
յոց խանութները գոց են . նոյնպէս
ալ հայկական թաղերուն մէջ գըտ-
նուող թաթառներու խանութները :
Յարձակումները կը շարունակուին
եւ այս բոլորը կը կործանէ փոքր
կառավարները եւ թաթառ սեփա-
կանատէրերը , որոնց տունները լքե-
ուած են : Դաւառին մէջ ընակչու-
թիւնը սովէն կը տառապի : Բարիւղի
վակոնները կայարաններուն մէջ
լքուած կը մնան : Բարիւղի մեծ
քանակութիւն մը , 2500 վակոն , կը
սպասէ ու կարելի չըլլար դրկել :

Պատու 11 սեպտ.— Աժանս Վիսթ-
նի կըսէ թէ խաղաղութիւնը վե-
րահաստատուելու համար Հայերէն եւ
թաթառներէ կազմուած խորհուրդը
որոշած է սկզբամբ Կովկասի մէջ
ընդհանուր ժողով մը գումարել
քննելու եւ Հայերու թաթառներու մի-
ջեւ թշնամութեան գլխաւոր պատ-
ճառները : Խորհուրդը յետոյ որոշեց
որ նիւթական փոխադարձ պատաս-
խանատուութիւնը Հայերու եւ թա-
թառներու միջեւ ճշդուի : 1906
յուշուարէն սկսեալ , եթէ կոտո-
րածները կամ թաթառները դեռ
տեղի ունենան : Միւս կողմէ կա-
ռավարութիւնը պիտի պարտաւորուի
խիստ միջոցներ ձեռք առնել ըը-
նակչած կեանքը եւ ինչքը ապա-
հովելու :

Տասը մահմետականներ եւ տասը
հայեր իրենց միլիոններու համող հա-
րստութեամբ երաշխաւորեցին այս
համաձայնութեան կէտ առ կէտ գործա-
դուլութիւնը :

Իրաւարարական ատենոյ մը պիտի
հաստատուի ապագայ հաւանական
բոլոր դաւադրութեանց առջեւ ունե-
լու համար : Այս համաձայնութեան դոր-
ժագրութիւնը կը սկսի հոկտեմ . 1 ին-

ԱՆՈՐ ՆՇՈՆ

— 5 —

Բազմիդի 155 թիւի մէջ տը-
պագրուած է մի խիստ նշանակա-
լից նամակ Բագուից , որը ստորեւ
առաջ ենք բերում այս անգամ
առանց ու ե խօսք ասելու մեր
կողմից :

Ահա այս նամակը :

Այս օրերս Բագուում տեղի ունեցաւ
մի դէպք . որը իրապէս յուզեց ցարդ
խաղաղ շէջը՝ տարրերը : Մի խօս-
քը վերաբերում է ուսանելի եւ հա-
յերի միջեւ տեղի ունեցած մի ընդ-
հարման , որը վերջացաւ արիւնահե-
ղութեամբ :

Ինչից առաջացաւ ընդհանրուած—
գիտար է ձշտիւ իմանալ . ըստ Իրե-
ւոյթին , մի քանի հայեր եւ ուս-
անելի միջեւ վէճ էր ծագել թիւթա-
խաղի ժամանակ : Այդպիսի վէճերը սո-
վորական բաներ են , որոնք հաւասա-
րապէս տեղի են ունենում բոլոր աղ-
քերի ներկայացուցիչներին միջեւ եւ
վատ դէպքում վերջանում են սուր
ու զմիտցով եւ ոստիկանով : Սակայն
այս անգամ վերջաբանն արիւնահեղ էր
եւ անսպասելի շարագուշակ :

Վէճին մասնակցող հայերից մէկը
(պաշտպանութիւն թէ յարձակութիւն
յայտնի չէ) դիմեց ատրճանակի օգնու-
թեան եւ տեղի ու տեղը պառկեցրեց
իւր հակառակորդ ուսանելիից երկուսն ,
իսկ երկուրորն վերաւորեց ծանր կեր-
պով :

Ոստիկանութիւնն , ըստ սովորակա-
նին , բացակայում էր , եւ մարդաս-
պանին , նմանապէս եւ նրա հայ ընկեր-
ներին աշողուեց իրարանցման ժա-
մանակ փախչել : Չափազանց արա-
գօրէն անցըր վայրը հաւաքուեց ա-
հագին ամբոխ , բաղկացած գլխաւո-
րապէս ուսուցանողներից յորդ տօն
էր , որ սարսափելի յուզուած սկսեց
ջարդ ու փշուր անել մանրավա-
ճառի մի խանութ , որ թաղեցուց էր
մարդասպան ընկերների հետ—նրանց
այնտեղից դուրս հանելու եւ բանհո-
գի անելու համար : Ինչ հանգաման-
քը , որ խանութատէրը հայ էր՝ աւե-
լի եւս սաստկացրեց ամբոխի վրէ-
ժառութեան զգացումները եւ նոր ու-
ղութիւն տուեց այդ զգացումներին
հայերի դէմ ընդհանրապէս : Որովհե-
տեւ դժուար էր խանութ մտնել ,
այդ պատճառով նաեւ թափեցին խա-
նութի վրայ եւ վառեցին մարդաս-
պանին եւ նրա կարծեցեալ թաղը-
նողներին ողջ ողջ այրելու համար :
Վրա հասած հրէշները հոնցքերն հըր-
դեհ , իսկ ոճրագործը եւ ամենքը ,
ով գտնուում էր խանութում , մինչ
այդ կարողացել էին քանդել պատը
եւ փախչել : Ամբոխն սկսել էր վայ-
րագութիւններ գործել նոյն իսկ այն
ժամանակ , երբ կազակները եկան :

Ոստիկանապետի հասցէին , որը վկայեց ,
թէ ոճրագործը խանութի մէջ չէ մե-
ղադրանքներ թափուեցին , թէ նա դիտ-
մամբ պահուած մարդասպանին , կատա-
ղած ամբոխը սպառնալով գրոհ տո-
ւեց դէպի նա եւ մինչեւ անգամ ,
ասում են , զգալի կերպով ջարդեց
նրան , մինչեւ որ կազակներն աղաւտե-
ցին նրան : Չնայելով կազակներին

ներկայութեան , ամբոխը հետզհետէ
աւելանալով , շարունակում էր աղմը-
կել եւ յուզուել . աւելի ու աւելի խիստ
ու յաճախ աղաղակներ էին լսոււմ .
որոնցով կոչոււմ էին անոււմ « ջարդե-
լու հայերին » . վերջապէս , կատաղու-
թեամբ բռնուած ամբոխն ամբողջովին
դիմեց դէպի հայկական թաղերը :
(Գրեթէ բոլոր հայերը , որոնք բնակ-
ւում էին քաղաքի զանազան մասե-
րում , փնտրուարի կոտորածից յետոյ ,
դուրս եկան քաղաքի թրքական մա-
սից եւ ամբողջովին բռնեցին մի քա-
նի թաղեր քաղաքի ներքեւ մասում ,
երկաթուղու կայարանի , ծովի եւ Սեւ
քաղաքի միջեւ :

Անցքի վայրն եկաւ նահանգապետը ,
այլ եւ , բացի կազակներից , հետեւակ
զօրքը կանչուեց : Երկար ջանքերից
յետոյ միայն նահանգապետին աջո-
ղուեց համոզել ամբոխին , որ ցըր-
ուի : Ամբոխը ցրուեց աստիճանա-
բար այն սպառնալիքից յետոյ միայն ,
թէ կանչուած զօրքերն ու կազակ-
ները զէնքի կը դիմեն :

Այս դէպքը կարեւոր է իրենէ գա-
լիքի երկրաշարի մի նշան : Մինչեւ
այժմ ուսանելը ոչ մի անբարեացակամ
զգացում չէին տածում դէպի հա-
յերը եւ վերջիններն ու թուրքե-
րի միջեւ եղած արեւահեղ կոն-
ների մէջ խիստ չէզոք դիրք էին
պահում : Բայց անընդհատ , բազմա-
թիւ , թէեւ մասնակի սպանութիւն-
ները , որոնք մեծ մասով փնտրուարի
անցքերի , նմանապէս եւ Երեւանի
ու Նախիջևանի հայ-թրքական ա-
րիւնահեղ ընդհարումների արձագան-
քն են հանդիսանում , — անտանե-
լի են դառնում եւ ուսանելի համար :
Բանն է այն է , որ զոհերի թիւում քիչ
չեն նաեւ ուսանելը , իսկ վերջիննե-
րի կեանքը , Բագու—Բալխանում
տիրող այժման անխիստութեան մէջ ,
վտանգուած է ոչ պակաս քան ուրիշ աղ-
գութեանց ներկայացուցիչների կեանքը :
Ջղային լարուած դրութիւնը , իր-
եւ հետեւանք այդ վտանգի , գըլ-
խաւոր պատճառը հանդիսացաւ վե-
րոյիչեալ անցքի : Ինչու՞ կատա-
ղութիւնն ու ատելութիւնն այս
դէպքում աւելուեց հէնց բոլոր հա-
յերի դէմ , եթէ յանցաւորը մի
հայ էր միայն , ինչու՞ իրապէս սար-
սափելի է ընդհանուր հայ-ուսանական
արիւնահեղ ընդհարման , ինչու՞ կա-
տաղութիւնը , որի պատճառը իրերի
ընդհանուր դրութիւնից առաջ եկած
ներկայ վտանգն է , ուղղոււմ է
հայերի դէմ , եւ ոչ թէ թուրքե-
րի , — այս բոլորի շարժառիթները
մնում են իրեն հանելուկ :

Լոգիկան եւ անաշուտ վերաբեր-
մունքը դէպի իրերը , յամենայն
դէպս , ոչ մի հիւրք չեն տալիս
ներկայումս տիրող անխիստութեան
եւ ընդհանուր տեռորի համար մե-
ղադրելու հայերին աւելի , քան որ
եւրոպէ ուրիշի : Փաստերը , սակայն ,
փաստ են մնում . ուսուս ամբոխի
մերձեցումը թուրք ամբոխի հետ ա-
ճում է եւ ժամանակ առ ժամանակ
ցուցարարական ձեւեր է ստանում
է միեւնոյն ժամանակ աճում է պա-
ռակտոււմ ուսանելի եւ հայերի մի-
ջեւ :

« ՆՈՐ ԴԱՐ »

Ա Ջ Դ

Գոյէժական—Երիտասարդ մը որ ըն-
թացաւարտ եղած է նաեւ Ամերիկեան
բարձրագոյն վարժարանէ մը , իր պա-
րապոյ ժամերուն տրամադրի է մաս-
նաւոր դասեր տալ Անգլիէիէն :

Պայմաններու մասին խմբագրութեան
դիմել :

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹՈՒՐԻՔ ՄԸ

Ա .

Ամբոխը առաջ , պարագաներու
բերումով , բարեբախտութիւնն ունե-
ցայ ծանօթանալու բարձրաստիճան
թուրք երիտասարդի մը հետ , որ իր
ազատամիտ գաղափարներուն համար
միշտ կռակածելի երեւցած էր կա-
ռավարութեան աչքին : Իր հայրն ալ ,
նշանաւոր պաշտօնատար մ'էր , երբե-
մըն , Սուլթանին ներկայ կառավա-
րութեան մէջ , խիստ նշանակելի դի-
քի մը բարձրացած է , բայց յետոյ
հաւատարմութեան մէջ կասկածուե-
լով իր մէկ քանի տարաբախտ նա-
խորդներուն տխուր ճակատագիրը
բաժնած է աքսորանքի մէջ :

Եւ որովհետեւ թուրք բարեկամ
հիմա ազատ երկրի մը արեւին
տակ կապրի , հետեւ բռնակալութեան
ճիւղաներէն , հարկ չեմ տեսներ
յօդուածին մէջ վերապահումներ ը-
նելու , խորհելով որ կրնամ իր անձը
վտանգի նախաքննելու ո եւ է պատ-
ճառ տալ :

Իրեն հետ ծանօթանալէս առաջ
լսած ըլլալով իր մասին , միշտ յար-
գալից վերաբերում մը ունեցայ ի-
րեն հանդէպ : Ինքն ալ փոխադար-
ձաբար մասնաւոր համակրանքով մը
կը տեսնէր ինձի հետ , ինչ որ
յետոյ տեսակ մը մտերմութեան
փոխուեցաւ :

Թուրք բարեկամս — ներքեցէք
որ այսպէս կոչեմ զինքը — մանկու-
թեանը եւրոպացի դատաւարակներու եւ
դատաւարակներու ձեռքը մեծցած
ըլլալով ինքնատու կըթուրէին մը ա-
ռած էր , բայց բացարձակապէս ան-
տեղեակ էր իր մայրենի լեզուին :
Դանի մը բառ չիտկէ շիտակ ոչ
կրնար կարդալ , ոչ ալ կրնար գրել ,
միայն մաքուր խօսել : Եւրոպացուցած
էին իրեն եւ ինք այդպիսով կը
բաւականանար :

Օր մը դիտողութիւն ըրի թուր-
քերէն իր ունեցած յայտնի տգիտու-
թեան համար . — « Մի գարմանար , ը-
սաւ ժպիտով մը , մեր երիտասարդնե-
րը , ընդհանրապէս բարձրաստիճան
պաշտօնատարներու տղաներ , ինձի
չափ ալ չեն գիտեր իրենց լեզուն ,
սակայն նախարարութիւններու պաշ-
տօնատուներուն մէջ էն լաւագոյն
դիրքերը գրաւած են : Պաշտօնա-
տուն կերպիւն ցուէնելու համար որ
զործ ունին , բայց կը դառնան ա-
ռանց գործ մը տեսնելու : Իսկ ե-
թէ գործ մը ըլլայ , անկա ալ իրենց
ստորագրանքներուն ձեռքով տեսնելով
կը բաւականանան : Այս ստորա-
դաս պաշտօնեան եւր , որոնք
գրեթէ ոչինչ ամսականներ կառնեն ,
կաշառակերութեամբ կապրեն եւ ժո-
ղովուրդի հասարակ գաւակներ են :
Ասոնց մէջ երբեմն հայեր եւ յայնք
ալ կը գտնուին » :

Մտացի էր բարեկամս , արդարեւ
անկեղծ հայրենասէր , բայց մտա-
ւանդ սիրող փառքի եւ իշխանու-
թեան : Կ'ատէր Սուլթան Համիտը—
բան մը որ դարասկզբիկ նորութիւն
մը եղած է հասարակ նախադիմա-
րանէ ելնող թուրք պատանիներու
համար անգամ—եւ չէր կրնար հան-
դուրել բնականութեան որ մար-
դամեղեմանը պատրաստուելու կը
ճգնի , եւ թոյլ չի տար միտքերուն
ազատ խորհիլ : Թէեւ ես եւ է
դիտողութիւն չէի ընել , բայց կը
կարծեմ որ իր այս արհամարտ ա-

տեղութիւնը Սուլթանին հանդէպ, ուրիշ պատճառներ ալ ունէր:

Շատ կը սիրէր զիւրաքանիւ զազաքական եւ կրօնական խնդիրներու վրայ: Բանի մը չէր հաւատար, բայց միշտ մասնաւոր ուշադրութիւնով եւ հետաքրքրութեամբ մը կը կարդար Բերքատնէութեան վրայ խօսող գիրքեր, գրուած ականաւոր աստուածաբաններէ:

Վիճարանութեան մը միջոցին ըսաւ. — « Բերքատնէութիւնը ապագայի կը ընծայէ, մահմետականութիւնը զօրաւորներու կը ընծայէ, որոնք կուզեն տիրել եւ չարքիւ մարդոց ներկայ կիրքներուն համեմատ: Կը նախընտրեմ Մահմետականութիւնը, որովհետեւ անոր սկզբունքներուն հետեւողութեամբ կարելի է կեանքը վայելել եւ յաջող լինի... » Եւ չկրցի հասկնալ յաջողի բառը, բայց ասիկա դաւանանքն է նաեւ բոլոր այն երիտասարդ թուրքներուն, որոնք յաւակնոտ ինքնագոյութեամբ մը ինքզինքնին ազատամարտ բառով կ'որակեն:

Ասոնցմէ շատեր պիտի տեսնէք Պոլսոյ մայրիկներուն վրայ, հաւուռ զգացող մարդիկ, իմաստակ դժգոհներ, որոնք ձեռքերնին ծալլած կը գանգատին միայն, եւ իրենց երիտասարդութիւնը անբարոյականութեան մէջ կը մաշեցնեն եւ կը չընեն աղտոտութիւններու մէջ:

Սուլթանը լաւ կը ճանչնայ զանոնք բայց հարկ չի տեսներ վճարական միջոցներու դիմելու, որովհետեւ վստահ է թէ բոլորովին անկարող են լուրջ եւ գործնական երեւոյթ մը տալու իրենց բողոքին:

Ուրիշ կերպով սակայն անոնց հիշատակներն ախորժակները կը զրգռէ, որպէսզի անկարող ըլլան ազատամարտ խոյանքներու հաճոյքէ զատ ուրիշ բանի վրայ չի մըտածեն: Հոս յիշեմ պզտիկ բայց սովորական եղող դէպք մը, աւելի որոշ ընելու համար այս կէտը:

Իրապէս զարգացած երիտասարդ մը կը պատմէր ինձի թէ, երբ գիշեր մը ընկերի մը հետ ունեցած տեսութենէն կը դառնար յանկարծ կասկածուելով ձերբակալուեցաւ:

— Ուրիշ կուգայիք հարցունեցաւ իրեն:

— Հանրատունէն, պատասխանեց երիտասարդը:

— Ապրիլ 17, հայտէ գնա...:

Անկեղծներ կարելի է որ ըլլան այս երիտասարդներուն մէջ, բայց ընդհանրապէս, ըլլայ երկրին, ըլլայ արտասահմանի մէջ անոնք յաճախ մղուած են Սուլթանին դէմ գործելու անոր համար որ կամ անիւրաւուած են, եւ կամ կարեւորութիւն չէ տրուած իրենց կարծեցեալ արժանիքին:

Բարենորոգումներ, զօրուար է հաւատար որ այդ ըլլայ իրենց ուզածը, եւ եթէ իրապէս կուզեն, իրենց համար է աւելի քան թէ այն ոչ մահմետական ժողովուրդներուն համար, որոնք լուծին տակ կը հեծնեն կանցնիմ առ այժմ եւ կը թողուի որ այս խնդիրներու մասին յետոյ իմ թուրք բարեկամ խօսի, ինչ որն ինչպէս կ'ընեն զուրկ չի կրնար ըլլալ մասնաւորապէս մեզ հայերու համար:

Իմ բարեկամս ինչպէս դիտեցի արդէն, զուրկ չէր անձնական արժանիքէ, բայց հակառակ իր ստացած ազատամարտ դաստիարակութեան, յայտնած գաղափարներուն եւ ճնշուած ժողովուրդներու ազատութեան ջատագով մը ըլլալուն:

տակաւն թուրք կը մնար:

Կը յիշեմ կարգացած ըլլալ մասնաւորապէս այս մասին գրուած յօդուած մը, Ամերիկեան լուրջ աստիճանի մը մէջ, ուր Պոլսիցի նամակներուն կարգաւորողը, նոյն գիտողութիւնը կը նշէր հաստատելով որ թուրքը միշտ իր կռաւարժութեան գործակալն է, նոյնիսկ այն ատեն, երբ զօրած եւ սրտեղած է անոր դէմ:

Տարակոյս չկայ թէ բոլոր անոնք որ զրկուած են ներկայիս փառնախին շնորհներէն, ինքզինքնին բարեկարգութեան եւ ազատութեան կողմնակիցներ կը հռչակեն, եւ վաղը պիտի մոռնան իրենց եղած ամէն զրկանք եւ կռաւարժութեան ստրուկ գործակալներն պիտի ըլլան վերջոյն, եթէ միայն վերստանան ինչ որ կորսնցուցած են երբեմն:

Դժգոհներու մասնաւորապէս բարձրաստիճան դժգոհներու թիւը հետեւեալ սկսած է աճիլ իրենց դէմ ձեռք առնուած խտուրթներուն պատճառաւ: Իմ բարեկամս անոնցմէ մէկն է եւ « ազատամարտ թուրքեր » կը կոչէ իր ընկերները, որոնցմէ շատեր արտասահմանի մէջ հոս հոն կը սըլլըքան, կը հակառակին եւ կը հայտնեն չար բախտին:

Թէ ինչ է այս մարդոց պահանջը, թէ ինչ կը խորհին թուրքերոյ մէջ գտնուող հպատակ ժողովուրդներու եղած զրկանքներուն եւ անոնց մասին, թուրք բարեկամս, տեսակցութեան մը միջոցին—որ վերջինը եղաւ—բացարձակապէս հասկըցուց ինձի, Լաւանքները նոր բաներ չեն, բայց շահեկան է ըսել երբ խօսողը ինքզինք « ազատամարտ » կոչող թուրք մըն է:

(Շարունակելի)

ՏՓՂԻՍԻ ԴԵՊՔԸ

(Պաշտօնական հաղորդագրութիւն)

Օգոստոս 29-ին, երկուշիսն ժամը մօտ 9-ին, բանուորներ եւ երկսեռ երիտասարդութեան մի խումբ ներս խուժեց թիֆլիսի քաղաքային խորհրդի նիստերի դահլիճը, որտեղ ոչ մի նիստ չկար: Այս մասին տեղեկութիւն ստանալով, եւ խնդրիցի քաղաքագլխին միջոցներ ձեռք առնել հասարակութիւնը հեռացնելու խորհրդի դահլիճից, քաղաքագլուխը պատասխանեց, թէ իւր միջոցներով ինքը չի կարող հեռացնել ժողովականներին եւ թէ այդպիսի համախմբումն ինքը հայտնաք է համարում քաղաքային ինքնավարութեան գէտ: Այն ժամանակ եւ հրամայեցի ոստիկանութեանը, որ հասարակութեանը հեռացնէ դահլիճից: Այս բանի համար նիստերի դահլիճը մտած տեղական պրիստաւին ամբոխը կոպտաբար դուրս մղեց, ուստի կարգադրուեց հասարակութեանը հեռացնել զինուորական ուժով եւ այնտեղ ուղարկեց պալատական գնդի 3-րդ հարիւրեակի հրամանատարը: Երբ հարիւրեակի հրամանատարը դահլիճ մտաւ եւ չթոյլատրուած ժողովին իմ անունից առաջարկեց անյապաղ ցրուել, խոստանալով, իմ տուած լիազօրութեամբ, որ հնազանդութեան դէպքում ոչ ոք չի բռնուի, ժողովականներն այս բանին պատասխանե-

ցին աղաղակներով եւ աղմուկով եւ թէեւ սկսեցին հեռանալ, բայց փախչողները կարգիներ վրայ ասրճանակներէն պարպում, իսկ յետոյ բակից եւ փողոցից դէպի խորհրդի դահլիճ լուսամուտները գնդակներ տեղացին: Ընդ մին հրագէն պարպողները մի մտաւ, քանդիլով լուսարդի կից սենեակի պատը, մտաւ այնտեղ եւ նոյնպէս սկսաւ ասրճանակներ պարպել լուսամուտից դէպի փողոց, որով ծանրապէս վերաւորուեցին մի կազակ եւ ոստիկան, ուստի կազակները ըստպուեցին էին իրենց կողմից հրացաններ պարպել: Կարգը վերականգնելուց յետոյ պարզուեց, որ քսանեւերեք հոգի սպաննուած են եւ մօտ յիսուն հոգի վերաւորուած, եւ ամբոխի համախմբուած զանազան տեղերում հաւաքուած են մեծ քանակութեամբ ոճորի կոչեր: Նախորդ յայտարարութիւններով եւ արդէն նախագուշակեցին իմ բնակիչներին, որ ամեն մի չթոյլատրուած համախմբում կը ցրուի ուժով, իսկ զէնքով դիմադրելու դէպքում կը ճնշուի զէնքով, ինչ որ այս անգամ կատարուեց: Դարձեալ նախագուշակեցին իմ եւ զիմում եւ թիֆլիս քաղաքի խոհեմութեանը, խնդրելով խտուրթ տարել իմ հրատարակած պարտադիր կանոնները եւ դրանով առաջն առնել այնպիսի ցաւալի ահաբեկչութիւններ: Երբ սկսեցաւ այսօր:

29 օգոստոսի 1905 թուի, թիֆլիս: Թիֆլիսի ժամանակաւոր ընդհանուր նահանգապետ գեներալ-լէյտենանտ ԵԱՅԿԵԻՉ:

ԱԶԳԱՅԻՆ

Գահիրէ հրատարակուող Լուսաբերին մէջ կը կարդանք.

« Կը լսենք որ Գահիրէի հայ դրամատէրներէն մի քանին Պոլսէն Անգլ. թղթատարութեան միջոցով նամակներ ստացած են, որոնցմով որոշ գումարներ պահանջուած են իրենցմէ: Նամակները Հնչակեան կուսակցութեան կնիքը կը կրեն ելեր: Տեղական թերթերն ալ հաղորդեցին այս լուրը »:

— Յունաստանէ եկող հայ մը կը պատմէ թէ Բիւրէյի մէջ Յոյները սկսած են Հայերուն թշնամութիւն ընել: Այդ ֆանատիկ ժողովուրդը այն սխալ համոզումը ունեցեր է որ Հայերը Պուլկարներուն հետ միացած Յունաստանի մէջ դաւադրութիւններ պիտի ընեն: Այս պատճառաւ շոգենաւէն ելլող հայերը թէ յոյն կառավարութենէն կը նեղուին եւ թէ ժողովուրդէն կը ծծուին ու կը տանջուին եղեր:

Յոյներուն այս վատ վերաբերումը աւելի առաջ ալ իմացուած ըլլալով, հոսկէ Եգիպտոս երթալ ուզող խումբ մը ազգայիններ թրիքսթի ճամբով մեկնեցան վեց օր առաջ:

— Վեհ. Կաթողիկոսին հրամա-

նաւ օգոստ. 28 ին իրիկունը Տիւղիսէն Հաճի-Բեապուլ գացեր են Տ. Նահապետ եպիսկ. և Տ. Զաւէն վրդ. դիմաւորելու Պարսից Շահը և ողջունելու յանուն Ս. Հայրապետին:

— Ս. Էջմիածնի կալուածներուն և դրամներուն յանձնումը տեղի ունեցած է: Նոյնպէս Տիւղիսի նահանգային պետական դպրոցներուն տեսուչը հայոց առաջնորդին այցելութիւն մը տալով, բանակցեր է հայոց վարժարաններուն պատկանող բոլոր շէնքերը ազգին վերադարձնելու ձեւակերպութեան վրայ: Այս յանձնումը կատարուելէ քանի մը օր յետոյ ետ առնուած վարժարաններուն մէջ տեղի պիտի ունենայ աշակերտաց ընդունելութիւնը:

« ԻՐԱՆԻՆԻ » ի պատասխանները

ԳԱՀԻՐԷ Կ. Ե.— 26րդ դրկաւ 13.50 ֆր. և հասաւ 5 օր առաջ, բայց նա մահինը կրկին չը հասաւ. կը զարմանանք:

Կ. ՊՈԼԻՍ Պապանով.— Մենք ձեզ չենք ճանչնար, ոչ ձեր հոսքէն գիտենք եւ ոչ ալ թերթ լրկած ենք: Վատ թշնամի մը ձեզ այդ կերպով վտանգել ուզած պիտի ըլլայ: Ճանչցէք ձեր թշնամին ով որ է:

— Յակոբ Էրօեանի հոսքէն փնտրող անձը խմբագրատուն թող գայ:

ՉԸ ՎՃԱՐՈՂՆԵՐՈՒՆ

Ամսոյս 30 էն անգին պիտի դադրեցնենք Իրաւունքի առաքումը մեր այն բաժանորդներուն որոնք մինչեւ այդ օրը իրենց ներկայ տարւոյ բաժնեգինը վճարած չեն ըլլար: Եգիպտոսի, Ամերիկայի եւ ուրիշ հեռաւոր երկրներու համար պիտի սպասենք մինչեւ հոկտ. 15:

Աւելորդ է ըսել թէ բաժանորդներու մէկ մասին այս պարտօղանցութեանը պատճառաւ թէ' մենք նիւթական դժուարութեանց կը մատնուինք եւ թէ արտասահմանի բաժանորդները երբեմն իրենց թերթերը ոչ կը ստանան: Այս անտեղիութեանց առջեւ միանգամ ընդ միշտ առնելու համար, ստիպուած ենք այլ եւս չը վճարողներու հանդէպ վրձնական քայլ առնել:

Ա. Զ. Դ

Ա. Զ. Դ. Պաշտօնական-Մարմիններէ վկայեալ դաստիարակ-ուսուցիչ մը, որ 6-7 տարիներէ հետեւ անընդհատաբար թուրքերի եւ Պուլկարի մէջ պաշտօններ վարած է, կուզէ Ռումանիոյ կամ Պուլկարի վարժարանաց միոյն մէջ պաշտօն մը ընձեռել՝ չափաւոր պայմաններով: Բանակցութեանց համար դիմել « Իրաւունք » ի խմբագրութեան՝ մինչեւ ներկայ ամսոյ 24 ի չարսի օրը:

Յիշեալ ուսուցիչը, ունի նաեւ հմտութիւն՝ եկեղեցական երաժշտութեան:



ՀԱՎԱՏԻՍԱԹ

ՐՈՒՄԱՆԻԱ ՎԵ ԵՈՒՆԱՆԻՍՏԱՆ

Մաքէթոնիատա պուլընան պիր մըգտար Գուցօ-վալաթա-պիր օլընան գալմ սօն ոհնէլէրէ գառար Րում քիլիսէլէրինէ վէ մէքթէպլէրինէ կիթմէքտէ վէ Րումմա օգուժագտա վէ թիւրք հիւքիւմէթին նիւֆուս տէֆթէ-րինտէ Րում գայտ օլընմագտա ըտը Ծագաթ պիր գաչ սէնէլէր-տէն պէրու, Րումանիա հիւքիւ-մէթի Գուցօ-վալաթալըն անա լիսանլարը Րուման լիսանընա եագըն օլմասընտան իսթիֆատէ իթմէք իսթէյէրէք, անլէրի. թէ-մամը իլէ Րումէն եաթմագ ի-չին էն էվլէլ թիւրք հիւքիւմէ-թինին տօթլըղընը վէ էմնի-յէթինի քէնտիսինէ ճէլպ իթ-մէկէ չալըչտը, վէ պուլնու էլտէ իթմէք իչիւն Սուլթան Համիտին քէյթինէ վէ միճաղընա միւ-թապըգ հարէքէթ իթտի, էօյ-լէքի Րումանիա պիր սէրպէսթ հիւքիւմէթ իքէն Սուլթա-նըն խաթըր իչիւն Ժէօն-թիւրքլէրի գօլտու, Սուլթանըն ալէյհինէ օլան կաղէթալարը գա-բաթտը, գըրկընլարտանգալմագ-տա օլան էրմէնիլէրի իչէրի գա-պուլ իթմէտի, յեղափոխական-լարը իխրան իթտի, միթինլէրի մէնն էյլէտի վէ սաիթէ, իչթէ պիւ թիւն պու «աղիլլէքլէրի» Րումա-նիա Համիտի սէվտիկի իչիւն եաթ-մայուպ, իլլա քէնտի մէնֆաթը իչիւն, եանի Սուլթանա քէնտի-սինի էմնիլէթլի կէօթէրուպտէ՝ Գուցօ վալաթալըր ուլահլան-տըրմագ մագսէտի իլէ եաթար ըտը, վէ Սուլթան՝ Րումանիանըն կէօթէրտիկի պու սատագաթ-տան մէննուլ վէ տիկէր թա-րաֆտան Մաքէթոնիատաքի խը-րիսթիանլարտա ֆըրգա չըգար-մագ քէնտի բօլիթիգասընա բէք էլվէրիչլի կէօթմէքլէ, Րումէն հօճալարըն մէքթէպլէր ալմա-լարընա միւսատէ իթտի, իչպու մուվաֆագիլթ էլտէ իտիլմէ-սինտէ Րումանիա հէր սէնէ ճէ-սիմ մէպլաղլար թախսի իտէ-րէք Մաքէթոնիատա Րումէն մէքթէպլէրին մըգտարը կիւն պէ կիւն արթըրտը, վէ պու զա-յէտէ պէչ-օն սէնէ էվլէլ քէն-տիսինի Րում թէսմիլէ իտէն Գուցօ-վալաթալար սօն սէնէլէրտէ «էլհէմտ-իւլլահ Րումէնիլ» տէ-մէյէ պաշլատըլար :

Րումանիա հիւքիւմէթի պու սէմէրէի էլտէ իթտիքտէն սօն-րա, պիրագ տահա Սուլթանըն սագալընը օվչալարագ, կէչէն սէ-նէ պիր իրատէի սէնիլէն նէչը իթտիթմէկէ մուվաֆագ օլտու, Սուլթանըն պու եէնի իրատէ-սի թիւրքիատա Րումէն միլլէ-թինի ըսմէն թանըլուպ, անըն ալըր քիլիսէ վէ մէքթէպ ինչա-

սընա վէ քէնտի քիլիսէլէրինտէ Րումէննէ օգուժագտա վէ ալըր նուֆուս տէֆթէրի թուլթուլմա օլընա տալիր միւսատէլէրվէրտի-իչպու իրատէնին նէչըինէ մանի օլմագ իչիւն Րում Բաթ-րիգհանէսի հէր նէ գատար չա-լըչտը չապալատը իտէտէ Սուլ-թան վէ Պապը Ալի էհէմմիլթ վէրմէտիլէր, Եալընը պու սէ-պէպտէն Րումանիա վէ Եսնա-նիտան պէյինիտէ միւնասէպաթ կէրկիլէնտի, Եոլնանլըլար Բաթ-րիգհանէնին մուվաֆագիլթսիլթ-լիկինի կէօթիւքտէն սօնրա, ճէպրէ միւրաճաթ իտիլմէթի-նէ գարար վէրտիլէր, վէ պու եօլտա Մաքէթոնիա Րումա-լընա թէչլիլթագաթագալընտը-լար, չէթալար եօլլատըլար, Րումէն Հօճալարը վէ բաթալա-րը տէօլտիլէր, եարէլէտիլէր, պաղը քէսանը էօլտիւրտիլէր, Րումէն մէքթէպլինէ վէ քիլի-սէսինէ կիտէնլէրէ էնվալի ըէն-ճիտէլէր վէրտիլէր, վէ նիհայէթ իչի օլ տէրէճէյէ կէթիթիլէր քիլ պու կիւն Եոլնան վէ Րումէն հիւքիւմէթլէրի գաթի միւնա-սէպաթ իտուպ, էլլիլէրինի վէ գօնսօլսլարընը թարաֆէյն կէ-րի չէքտիլէր, տիւչման օրտու-լար, եարընտէ պէլքի թապա-լարը գօվաճագլար, էկէր սինօրօ տաշ օլտալար ըտը՝ չիմ-տիլէ գատար մուհարէպէյէ թու-թուչաճագլար ըտը :

Մաքէթոնիատա Րում չէթա-լարըն պուլկարլարա իճրա իթ-մէքտէ օլտըգլարը եէնի եէնի զուլուլմար վէ զատտարըլըլար եագընտա Պուլկարիա իլէ տա-խի Եոլնանիստանըն գաթի միւ-նասէպաթընա սէպէպ օլաճագլար կէօթիւնիլթ :

Պու իչլէր իչիւն Սուլթան Հա-միտէ գահգահա իլէ կիւլմէք տիւ-չիլթ :

ՐՈՒՍԻԱ

Րիկատան պիր թէլէկրաֆ իւղրէ, Լիվօն միւթէսարըֆը քէնտի խանէսինտէ ըվօլվէր տարպէլէրի իլէ գաթլ օլընմըչ տըր :

—Տօմպօլօ գաղապընտա պէօ-յիւք իլիթիլալար զուհուրա կէ-լէճէկինէ տալիր մալիլէ նաղը-րը մալիւմաթ ալըչ օլուպ, Չապ-թիէ նաղըրը ժէնէրալ Թրէքո-վա իլիթար իթտի, Պուլնու իւղէրինէ զապլիլէ նէգարէթին-տէն էմիլլէր վէրիլտի մէքթըր գալանըն հիւքիւմէթինէ սըգը թէտպիլլէր էլէ ալմագ իչիւն :

—Բօլնիատա եէնի գարըչըգ-լըլար զուհուրինտէն գօրգա-րագ, հիւքիւմէթ օլ թարտֆա քիլլիլէթլի ասքէր նագլ իթ-մէքտէ տիր :

—Կավկասիատա տախի թա-թարլար վէ էրմէնիլէր պէյինի-

տէ խուսուլթ վէ ճինայէթլէր տէվալ իթմէքտէ իտէտէ պէօյիւք գըրկընլար իչիտիլմէյօր, Պագուտա էրմէնիլէր վէ թաթար-լար պէյինիտէ միւնագալարը սուլհէն ֆասլ իթմէք իչիւն իքի թարաֆտան պէչէր քիչիտէն ի-պարէթ պիր հէյէթի հաքէմէ թէչլէր օլմուչ տըր :

Միլիոն սահիպի օլան օն էր-մէնիլէ օն թաթար պուլնտան սօնրա գուհուր իտէպիլէճէք խա-սարաթա զամին օլաճագլար :

Զ Ի Ն

Ջին Դալլէթի էվրոքա ուսուլի իլէ թէչլէրաթ վէ իսլահաթ իճ-րա իթմէք արդուսընտա պու-լընմագլէ, էվրոքա թէչսիսաթը-նը կէօղտէն կէչիլմէք վէ եա-գընտան թէտըգլ իթմէք մագ-սէտի իլէ պիր գօմիսիօնը մախ-սուս էվրոքալա եօլլամագ իսթէ-տի, իչպու գօմիսիօն կէչէն կիւն էվրոքալա միւթէվէտէհիլէն Բէ-քինտէն հարէքէթ իթտիլի էս-նատէ, չըմէնտըֆէր սթասէնըն-տան թըրէնէ օթուրուր իքէն, պիր պօմպա աթըլուպ, գօմիսիօն աղալարընտան պիր գաչ զաթ-լարը վէ 60 քիչի գատար եա-րէլէմիլ, Պօմպալը աթան չախս տախի եարէլի հալտէ վալիօնտա պուլընմըչ ալըր, իչպու վուգու-աթ էվրոքալարա վէ պուլնա-լըն ուսուլ վէ գալիտէլէրինէ զլտտ օլան միւթէսուպ մաա-րուֆ պօքէր ֆըրգասընըն իչի զանն օլընըյօր :

ՄԻԻԹԷՆԷՎԻԷ

Ինկիլիզ տօնանմասը եագընտա ճաթօն սուլարընա կիտէճէք տիր, Պու էսնատէ ճաթօն տօնանմասը ինկիլիզլէրի գարըլըմագ իչիւն թօթլանաճագ վէ իքի տօթ թէվլէթլէր օլ միւնասիպէթլէ տօթլըգլարընը տահա գալի-լէչտիլմիլ օլաճագլար, Ծագաթ ինկիլիզ տօնանմասընը պու զի-յարէթի սուլհ ահտնամէսինին ճաթօն իմրէրաթօրընտան թաս-տիգտէն սօնրա օլաճագ տըր :

—Ինկիլիզ հիւքիւմէթի Սին-կալիուր ատասընտա տէթօլար թէ-էսիս իթմէքտէ տիր :

—Մ. Վիթթէ Ամերիկատան ալտէթի միւնասիպէթլէ Ալմա-նիայա կիտուպ, իմրէրաթօր Վիլ-հէլմ իլէ վէ Բրէնս Պիւլով իլէ կէօթիլէտիլ :

Շու սըրա Րուսիա Ծրանսանըն միւթթէֆիլիկի իլէ պէրապէր Ալմանիանըն տօթլըղընը տախի գալիլէչտիլմէք զալլէթիլտէ պուլընըյօր :

—Ծրանսանըն սապըգ հարպիլէ նաղըրը Մ. Գալլէնեագ նալէհան վէֆաթ իթտի :

—Բրուսիատա գօլէրա էլան տէֆ օլմամըչ օլտըլընտան, Սպա-

նիա գըրալընըն Պէրլինէ կիթ-մէսի նոյեմբեր ալընա թէէլիթ օլընտը : Գըրալը միւչարիլէյհ Պէրլինտէն սօնրա վիէննայա տա-խի կիտէճէք տիր :

—Սուեգ պօղաղընտա պաթմըչ օլան Չաքուլ նամ վաթօր եօլու գաթամըչ օլմաղլէ, պօղաղըն չիթ-քէթի մէքթիւր վաթօրը բար-չալամագ իչիւն գարար վէրմիլ տիր :

ԹԻԻՃՃԱՐԻՑԷ

ՎԱՌՆԱ, ՉԱԿԻՐԷ	ՍԵՍՄ. 17
ՊՈՒՂՏԱՅ	
Վալօն 54-60 լիպ.	9.40 / 10. 60
Արապա 52-62 լիպ.	8. / 11 40
ԱՐԲԱ	
Վալօն 100 քիլօ հին	10. / 10. 40
Արապա 42-47 լիպ.	6. / 6. 60
ԵՈՒԼԱՅ արապա 33/36 լիպ.	4. 70/4.80
Վալօն 100 քիլօ	11. 20/11. 40
ՅԱՍՈՒԼԵԱ արապա 100 քիլօ 24-30	
ՌԱԲԻՑԱ 100	19. 20 19.60
Արապա 100 քիլօ	16-18
ՏԱՐԸ արապա	13/ 14
ԳՕԼՈՁ արապա 55-60 լիպ.	11. / 12.20
ՄԻՍԻՐ 57-58 լիպ.	7. 80/7
» 100 քիլօ	11.20- 11. 90
ՉԱՎՏԱՐ արապա	8. 60/ 8. 80
» 100 քիլօ	11. 80 / 12.
Կիւնտէ 50-60 վալօն վէ 600-700	
արապա կէլմէքտէ. վալօն մուսմէ-	
լէսի նաթօլէն20 ֆր. արապա մու-	
սմէլէսի նաթօլէն 20. 20	
ՍԱՐԻԱՅԻՑԷ	
նաթօլէն 20, 20 ֆրանք	
Օսմ. էրաթը 22, 75 ալթուլ ֆրանք	
ՊԱԳԱԼԻՑԷ	
Վարնա բիսպարնտա պագգալլէ	
մալլէրին պու կիւնքի ֆիլպթը, ալթու	
ֆրանք իլէ :	
ԳԱՀՎԷ	2.10/ 2.20
ՇԷԳԷՐ ՆԷՄԵ	73
ՇԷԳԷՐ քէսմէլ սանտըգ	36. 75
Բիթիլնձ ձէնօվա չուվալը	42
» ձաթն »	34.
» Ինկիլիզ »	28. 50
Բիգօն »	49.
ԿԱԶ Սանտըգ	12.
ՉԷԹԻՆ Լաղը քիլօ	1.—1. 10
ԳՈՒՐՈՒ Իւղիւմ	25

ՍՐԱՀ ՍԱՍԷՆԷԻԷ

Վերջին երկօյթ, միաք բարեաւ
Սեպտ. 18 կիւրակէ գիչեր՝ նատէժտա,
Հայ դերօ, խուսթ պիտի ներկայացնէ
առաջնորդութեամբ Պ. Վ. Պապանի
առաջին անգամ ըլլալով
ԱՌԻԹԻ ՈՐՍՈՐԴԸ
Միմօտրամ 4 արարուած
Երգեր եւ պարեր օր. Օլկայի եւ կա-
տակերգու Հաճի Թակոբի կողմէ
Սօֆիայի իշխանական խմբին առա-
ջին կարգի դերասաններէն Պ. Բօնչէֆ
պիտի մենախօսէ Պուլկարիլէն լեղուաւ
«ՀԱՅԵՐԸ
Իրենց արդի անդիլ կացութեանը մէջ»
ՎՀՈՒԿԸ

Թատերախաղ 3 արար եւ մէկ պատկեր

Одговорникъ А. Курбетянъ
позатина Д. Тодоровъ и С. Же—Варна